ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ



- Հիմք ընդունելով սակագների սահմանման ու վերանայման կարգի, սակագների հաշվարկման մեթոդիկայի դրույթները և հաշվի առնելով ընկերությունների տնտեսական գործունեության արդյունքների վրա ազդող գործոնները՝ 15.06.2023թ-ից հանձնաժողովի նախաձեռնությամբ սկսվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից գազամատակարարման համակարգի օպերատորի և բաշխման ծառայությունների, ինչպես նաև «Տրանսգազ» ՍՊԸ-ի կողմից բնական գազի փոխադրման սակագնի վերանայման գործընթաց:
- Գործընթացի շրջանակում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն ներկայացրել է սակագների վրա ազդող գործոններին առնչվող որոշ տեղեկատվություն և առաջարկություններ՝ գազի ստորին այրման ջերմության միջին կշռված արժեքի, նորոգման և նյութական ծախսերի կատարման, հիմնական միջոցների մաշվածության նորմայի կիրառման և միջին ամսական աշխատավարձի վերանայման վերաբերալ:



- ՀՀ կառավարության 16.06.2023թ. №970Լ որոշմամբ հավանություն է տրվել Երևան քաղաքը գազամատակարարման լրացուցիչ նոր հզորություններով ապահովելու ծրագրին և դրա իրականացման ժամանակացույցին՝ միաժամանակ առաջարկելով ՀԾԿՀ-ին գազամատակարարման համակարգում սակագների առաջիկա վերանայման գործընթացի շրջանակում ծրագրով նախատեսված գումարը, որպես միանվագ ծախս, ներառել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագների հաշվարկներում:
- Նշված ծրագրի գնահատված գումարը կազմում է շուրջ 20 մլրդ դրամ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունիսի 2023 թվականի N 970-Լ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԸ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՈՐ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԾՐԱԳՐԻՆ ԵՎ ԳԱԶԱԲԱՇԽՄԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հավանություն տալ Երևան քաղաքը գազամատակարարման լրացուցիչ նոր հզորություններով ապահովելու ծրագրին (այսուհետ՝ ծրագիր)՝ համաձայն N 1 հավելվածի, և գազաբաշխման հանգույցների կառուցման իրականացման ժամանակացույցին (այսուհետ՝ ժամանակացույց)՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սահմանել, որ ծրագիրն իրականացվում է ժամանակացույցին և ծրագրի փուլերին համապատասխան:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին (այսուհետ՝ հանձնաժողով)՝

1) գազամատակարարման համակարգում սակագների առաջիկա վերանայման գործընթացի շրջանակում ծրագրով նախատեսված գումարը որպես միանվագ ծախս ներառել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագների հաշվարկներում.

2) սպառողներին վաճառվող բնական գազի սակագների վրա հետագայում ծրագրի իրականացման ազդեցությունը չեզոքացնելու նպատակով Երևան քաղաքում գազամատակարարման ցանցին միացման համար դիմող անձանց համար սահմանել միացման վճար, որն առնվազն կապահովի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված գումարի վերադարձը՝ դրանք նվազեցնելով ընկերության կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագների հաշվարկներից: Միացման վճարը

Սակագների վրա ազդող հիմնական գործոնները

	Գործող սակագին	Նոր սակագին
$-ի փոխարժեք	480 դր/$	400 դր/$
Ջերմատվություն	8389 կկալ/խմ	8283 կկալ/խմ
Ներկրվող գազի գին՝ 7900 կկալ/խմ-ի համար	165.0 $/հազ. խմ	165.0 $/հազ. խմ
Ներկրվող գազի գին՝ ըստ ջերմատվության	175.21 $/հազ. խմ	173.0 $/հազ. խմ
Նորոգման և նյութական ծախսեր (սղաճ՝ 1.3%)	7515.77 մլն դրամ	7613.47 մլն դրամ

Սակագների վրա ազդող հիմնական գործոնները

	Գործող սակագին	Նոր սակագին
Միջին ամսական աշխատավարձ	227000 դրամ	258000 դրամ
Նոր ներդրումներ (2022թ. և 2023թ. 1-ին եռամսյակ), Կատարված ներդրումների վերադարձ մաշվածության տեսքով	- 9.7 մլրդ դրամ	15.7 մլրդ դրամ 18.2 մլրդ դրամ
Փոխհատուցման ենթակա գումար	- 2122.26 մլն դրամ	- 14189.40 մլն դրամ
Երևանը նոր հզորություններով ապահովելու ծրագիր	-	20 մլրդ դրամ

Գազամատակարարման համակարգում մատուցվող ծառայությունների՝ գործող և ՀԾԿՀ-ի աշխատակազմի հաշվարկած սակագները (առանց ԱԱՀ-ի)

№	Անվանումներ	Չափի միավոր	Գործող սակագին (01.04.2022-31.07.2023)	Առաջարկվող սակագին (01.08.2023-ից)
1	Բնական գազի փոխադրման սակագին	*դրամ/ հազ. խմ*	6 776.137	8 086.109
2	Գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը	*դրամ/ հազ. խմ*	23.350	22.706
3	Բնական գազի բաշխման սակագինը	*դրամ/ հազ. խմ*	14 451.240	18 674.936

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ